

**Անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի Rec(2003)22  
առաջարկություն Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական  
վաղաժամկետ ազատման) վերաբերյալ**

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2003 թվականի սեպտեմբերի 24-ին  
նախարարների տեղակալների 853-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի Խորհրդի կանոնադրության 15.բ հոդվածի դրույթների համաձայն,

հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների շահերից բխում է ազատազրկման ձևով պատիժների կատարման համար ընդհանուր սկզբունքներ սահմանելը՝ այդ ոլորտում միջազգային համագործակցությունն ամրապնդելու նպատակով,

ընդունելով, որ պայմանական ազատումը կրկնահանգագործությունը կանխելու և սոցիալական վերականգնումը խթանելու ամենաարդյունավետ ու ամենակառուցողական միջոցներից մեկն է, որն ապահովում է ազատությունից զրկված անձի ծրագրված, օժանդակվող ու վերահսկվող վերաինտեգրումը հասարակությանը,

հաշվի առնելով, որ դա պետք է կիրառվի առանձին հանգամանքներին հարմարեցվող եղանակներով և համապատասխանի արդարության ու անաչառության սկզբունքներին,

հաշվի առնելով, որ ազատազրկման հետ կապված ֆինանսական ծախսերը չափազանց մեծ բեռ են հասարակության համար, և որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անազատությունը հաճախ բացասական ազդեցություն է ունենում և հանցագործություն կատարած անձանց ուղղմանը չի նպաստում,

հետևաբար, հաշվի առնելով, որ ցանկալի է հնարավորինս կրճատել ազատագրկման ձևով պատժի տևողությունը, և որ մինչև պատիժը լրիվ կրելը պայմանական ազատումը այդ նպատակին հասնելու կարևոր միջոց է,

ընդունելով, որ պայմանական ազատման միջոցների համար պահանջվում է քաղաքական առաջնորդների, վարչական մարմինների պաշտոնատար անձանց, դատավորների, դատախազների, փաստաբանների ու հանրության աջակցությունը, ում անհրաժեշտ է տրամադրել ազատագրկման ձևով պատիժները փոփոխելու պատճառների մանրամասն բացատրություն,

հաշվի առնելով, որ պայմանական ազատման վերաբերյալ օրենսդրությունը և պրակտիկան պետք է համապատասխանեն իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքներին, որոնց առաջնային նպատակը մարդու իրավունքները երաշխավորելն է՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և այն մարմինների նախադեպային իրավունքի համաձայն, ում վերապահված է դրա կիրառումը,

հաշվի առնելով «Պայմանականորեն դատապարտված կամ պայմանականորեն ազատված հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վերահսկողության մասին» եվրոպական կոնվենցիան (ԵՊՇ թիվ 51),

գիտակցելով հետևյալ փաստաթղթերի կարևորությունը՝

- «Պատիժը կրելը հետաձգելու, պրոբացիայի և ազատագրկման այլ այլընտրանքների մասին» (65)1 բանաձև,
- «Պայմանականորեն դատապարտված կամ պայմանականորեն ազատված հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վերահսկողության ու վերականգնողական աշխատանքի գործնական կազմակերպման մասին» (70)1 բանաձև,
- «Երկարաժամկետ ազատագրկված անձանց նկատմամբ ուղղիչ-դաստիարակչական միջոցների մասին» (76) 2 բանաձև,
- «Ազատագրկմանը փոխարինող որոշ այլընտրանքային պատժամիջոցների մասին» (76) 10 բանաձև,

- «Քրեակատարողական հիմնարկից արձակուրդի վերաբերյալ» թիվ R (82) 16 առաջարկություն,
- «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» թիվ R (87) 3 առաջարկություն,
- «Քրեակատարողական հիմնարկում կրթության հնարավորությունների վերաբերյալ» թիվ R (89) 12 առաջարկություն,
- «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 առաջարկություն,
- «Դատապարտման ժամանակ հետևողականության վերաբերյալ» թիվ (92) 17 առաջարկություն,
- «Պատիժների և միջոցների կատարմանն առնչվող անձնակազմի վերաբերյալ» թիվ R (97) 12 առաջարկություն,
- «Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվի աճի մասին» թիվ R (99) 22 առաջարկություն,
- «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկություն,

Առաջարկում է, որ անդամ պետությունների կառավարությունները՝

1. իրենց օրենսդրությամբ նախատեսեն պայմանական ազատման մասին դրույթ, եթե այդ միջոցը դեռ նախատեսված չէ դրանով.
2. պայմանական ազատման վերաբերյալ իրենց օրենսդրության, քաղաքականության մեջ և գործելակերպերում առաջնորդվեն սույն առաջարկության հավելվածով նախատեսված սկզբունքներով.
3. ապահովեն պայմանական ազատման վերաբերյալ սույն առաջարկության և դրա բացատրական հուշագրի հնարավորինս լայն տարածումը:

## Rec(2003)22 առաջարկության հավելված

### I. Պայմանական ազատման սահմանումը

1. Սույն առաջարկության նպատակներով՝ պայմանական ազատում նշանակում է ազատագրկման դատապարտվածների վաղաժամկետ ազատում՝ ազատումից հետո կիրառվող անհատականացված պայմաններով: Համաներումը և ներումը սույն սահմանման մեջ չեն ընդգրկվում:

2. Պայմանական ազատումը այլընտրանքային միջոց է: Դրա ներմուծումն օրենսդրություն և կիրառումն առանձին դեպքերի նկատմամբ կարգավորվում է թիվ R (92) 16 առաջարկությամբ նախատեսված՝ այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոններով, ինչպես նաև «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկությամբ:

### II. Ընդհանուր սկզբունքները

3. Պայմանական ազատումը պետք է օժանդակի ազատությունից զրկված անձանց՝ քրեակատարողական հիմնարկի կյանքից անցում կատարել օրինապահ կյանքին հասարակության մեջ՝ ազատումից հետո կիրառվող պայմանների և վերահսկողության միջոցով, որոնք խթանում են այս նպատակը և նպաստում են հանրային անվտանգությանն ու հասարակության մեջ հանցավորության կրճատմանը:

4.ա Ազատագրկման բացասական հետևանքները կրճատելու և արտաքին աշխարհի անվտանգությունը երաշխավորող որոշակի պայմանների կիրառմամբ ազատությունից զրկված անձանց սոցիալական վերականգնումը խթանելու նպատակով՝ օրենքը պետք է պայմանական ազատումն ապահովի բոլոր ազատագրկման դատապարտվածների, այդ թվում՝ ցմահ ազատագրկման դատապարտվածների համար:

4բ. Եթե ազատագրկման ժամկետն այնքան կարճ է, որ պայմանական ազատումն անհնարին է, ապա պետք է կիրառվեն այս նպատակներին հասնելու այլ միջոցներ:

5. Պատիժը կրելու սկզբից ազատությունից զրկված անձինք պետք է իմանան, թե պատժի համար սահմանված նվազագույն ժամկետը (որը սահմանվել է ամբողջական ժամկետով և (կամ) պատժի ժամկետի մի մասով) կրելուց հետո երբ են իրենք օժտվելու ազատման իրավունքով, ինչպես նաև թե ինչ չափորոշիչներ են կիրառվելու իրենց ազատում տրամադրելու համար («ազատման հայեցողական համակարգ»), կամ թե երբ են իրենք օժտվելու ազատման իրավունքով՝ ամբողջական ժամկետի և (կամ) պատժի ժամկետի մի մասի հիման վրա սահմանված որոշակի ժամկետը կրելուց հետո («պարտադիր ազատման համակարգ»):

6. Նվազագույն կամ սահմանված ժամկետը չպետք է լինի այնքան երկար, որ անհնարին դարձնի պայմանական ազատման նպատակի իրագործումը:

7. Ուշադրություն պետք է դարձնել ռեսուրսների խնայողությանը, որը կարող է ապահովվել պատիժների առնչությամբ պարտադիր ազատման համակարգի կիրառմամբ, եթե անհատականացված բացասական գնահատումը միայն աննշան կերպով կփոփոխեր ազատման ժամկետը:

8. Պայմանականորեն ազատված անձանց կողմից ռեցիդիվի վտանգը նվազեցնելու նպատակով պետք է հնարավոր լինի նրանց նկատմամբ կիրառել հետևյալ անհատականացված պայմանները՝

- տուժողներին պատճառված վնասի համար փոխհատուցում վճարելը կամ հատուցում տրամադրելը.
- թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահման հետևանքով կամ էլ հանցագործության կատարման հետ ուղղակիորեն կապված՝ բուժման ենթակա առողջական վիճակի հետևանքով բուժման անցնելը.
- աշխատելը կամ այլ հաստատված մասնագիտական գործունեությամբ զբաղվելը, ինչպիսիք են, օրինակ, կրթությունը կամ մասնագիտական վերապատրաստումը.
- մասնակցությունը անձնական զարգացման ծրագրերին.
- որոշակի վայրերում բնակվելու կամ այդ վայրերն այցելելու արգելքը:

9. Սկզբունքորեն պայմանական ազատումը պետք է ուղեկցվի նաև վերահսկողությամբ, որը ներառում է աջակցություն ու հսկողության միջոցներ:

Վերահսկողության բնույթը, տևողությունը և խորությունը պետք է հարմարեցվեն յուրաքանչյուր առանձին դեպքին: Ճշգրտումներ կատարելը պետք է հնարավոր լինի պայմանական ազատման ամբողջ ընթացքում:

10. Պայմանները կամ վերահսկողական միջոցները պետք է սահմանվեն այնպիսի ժամանակահատվածի համար, որը չի գերազանցում ազատագրկման ձևով պատժի չկրած մասը:

11. Անորոշ տևողությամբ սահմանված պայմանները և վերահսկողական միջոցները պետք է կիրառվեն միայն այն դեպքերում, երբ դա միանգամայն անհրաժեշտ է հասարակության պաշտպանությունն ապահովելու համար և Rec(2000)22 առաջարկությամբ վերանայված՝ «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների 5-րդ կանոնով սահմանված երաշխիքներին համապատասխան:

### **III. Պայմանական ազատմանը նախապատրաստումը**

12. Պայմանական ազատմանը նախապատրաստումը պետք է կազմակերպվի՝ քրեակատարողական հիմնարկում աշխատող համապատասխան ամբողջ անձնակազմի ու ազատումից հետո իրականացվելիք վերահսկողության մեջ ներգրավվածների հետ սերտ համագործակցությամբ, և պետք է ավարտվի նվազագույն կամ սահմանված ժամկետի ավարտից առաջ:

13. Քրեակատարողական հիմնարկի ծառայությունները պետք է ապահովեն, որ ազատությունից զրկված անձինք մասնակցեն ազատումից առաջ իրականացվող համապատասխան ծրագրերին, և որպեսզի խրախուսվի նրանց մասնակցությունը կրթական ու վերապատրաստման դասընթացներին, որոնք նրանց նախապատրաստում են կյանքին հասարակության մեջ: Ազատագրկման ձևով պատիժների կատարման որոշ դրսևորումներ, ինչպիսիք են՝ մասնակի ազատությունը, բաց ռեժիմները կամ քրեակատարողական հիմնարկից դուրս տեղավորելը, պետք է օգտագործվեն հնարավորինս շատ՝ հասարակության մեջ ազատությունից զրկված անձանց սոցիալական վերականգնումը նախապատրաստելու նպատակով:

14. Պայմանական ազատմանը նախապատրաստումը պետք է նաև ներառի ազատությունից զրկված անձանց՝ իրենց ընտանիքի և մտերիմների հետ կապ

պահպանելու, հաստատելու ու վերահաստատելու հնարավորությունը, և այնպիսի ծառայությունների, կազմակերպությունների կամ կամավորական միավորումների հետ պայմանագրերի կնքումը, որոնք կարող են օժանդակել պայմանականորեն ազատված անձանց՝ հասարակության մեջ կյանքին հարմարվելու հարցում: Այդ նպատակով պետք է նախատեսվեն քրեակատարողական հիմնարկից արձակուրդի տարբեր ձևեր:

15. Պետք է խրախուսվի ազատումից հետո կիրառվող համապատասխան պայմանների ու վերահսկողության միջոցների վաղաժամկետ դիտարկումը: Ազատությունից զրկված անձանց պետք է մանրակրկիտ բացատրել ու նրանց հետ քննարկել հնարավոր պայմանները, տրամադրվելիք օգնությունը, հսկողության պահանջներն ու հնարավոր հետևանքները՝ ձախողելու դեպքում:

#### **IV. Պայմանական ազատում տրամադրելը**

##### *Հայեցողական ազատման համակարգը*

16. Այն նվազագույն ժամկետը, որը ազատությունից զրկված անձինք պետք է կրեն պայմանական ազատման իրավունք ստանալու համար, պետք է սահմանվի օրենքով:

17. Համապատասխան մարմինները պետք է նախաձեռնեն անհրաժեշտ ընթացակարգեր, որպեսզի հնարավորինս շուտ ընդունվի պայմանական ազատման մասին որոշումը՝ ազատությունից զրկված անձի կողմից պատժի նվազագույն ժամկետը կրելուց անմիջապես հետո:

18. Այն չափորոշիչները, որոնք պետք է բավարարեն ազատությունից զրկված անձինք պայմանական ազատում ստանալու համար, պետք է լինեն պարզ և հստակ: Դրանք նաև պետք է լինեն իրատեսական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն ազատությունից զրկված անձի անձնային առանձնահատկությունները, սոցիալական ու տնտեսական հանգամանքները, ինչպես նաև սոցիալական վերականգնման ծրագրերի հնարավորությունը:

19. Պայմանական ազատում տրամադրելիս աշխատանքի հնարավորությունների բացակայությունը չպետք է հիմք հանդիսանա պայմանական ազատումը մերժելու կամ հետաձգելու համար: Պետք է ջանքեր գործադրվեն՝ զբաղվածության այլ ձևեր գտնելու

համար: Մշտական կացության բացակայությունը չպետք է հիմք հանդիսանա պայմանական ազատումը մերժելու կամ հետաձգելու համար, և նման դեպքերում պետք է տրամադրվի ժամանակավոր կացություն:

20. Պայմանական ազատում տրամադրելու չափորոշիչները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի պայմանական ազատում տրամադրվի բոլոր այն ազատությունից զրկված անձանց, ովքեր բավարարում են օրինապահ քաղաքացիներ դառնալու համար երաշխիքների նվազագույն մակարդակը: Ազատությունից զրկված անձի կողմից չափորոշիչների չբավարարումը ապացուցելու պարտականությունը պետք է դրվի իշխանությունների վրա:

21. Եթե որոշում ընդունող մարմինը որոշում է չտրամադրել պայմանական ազատում, ապա այն պետք է ժամկետ սահմանի՝ տվյալ հարցը վերանայելու համար: Ամեն դեպքում, ազատությունից զրկված անձինք պետք է կարողանան կրկին դիմել որոշում ընդունող մարմին այն պահից, երբ իրենց դրությունը զգալիորեն փոխվի հոգուտ իրենց:

#### *Պարտադիր ազատման համակարգը*

22. Այն ժամկետը, որը ազատությունից զրկված անձինք պետք է կրեն ազատման իրավունք ստանալու համար, պետք է ամրագրվի օրենքով:

23. Միայն օրենքով նախատեսված բացառիկ հանգամանքներում պետք է հնարավոր լինի հետաձգել ազատումը:

24. Ազատումը հետաձգելու որոշմամբ պետք է նշանակվի ազատման նոր ժամկետ:

#### **V. Պայմաններ սահմանելը**

25. Սահմանվելիք պայմանները և վերահսկողության անհրաժեշտությունը քննարկելիս որոշում ընդունող մարմինը պետք է իր տրամադրության տակ ունենա զեկույցներ, այդ թվում՝ բանավոր հայտարարություններ քրեակատարողական հիմնարկում աշխատող անձնակազմից, որի անդամները ճանաչում են ազատությունից զրկված անձանց և ծանոթ են նրանց անձնական հանգամանքներին: Ազատումից հետո իրականացվելիք վերահսկողության մեջ ներգրավված մասնագետներն ու ազատությունից զրկված անձի



սոցիալական հանգամանքներին ծանոթ այլ անձինք նույնպես պետք է տեղեկություններ տրամադրեն:

26. Որոշում ընդունող մարմինը պետք է ապահովի, որ ազատությունից զրկված անձինք գիտակցեն սահմանված պայմանները, տրամադրվելիք օգնությունը, հսկողության պահանջները, ինչպես նաև պայմանները չկատարելու հնարավոր հետևանքները:

## **VI. Պայմանական ազատման իրականացումը**

27. Եթե պայմանական ազատման իրականացումը պետք է հետաձգվի, ազատում ակնկալող ազատությունից զրկված անձինք պետք է պահվեն այնպիսի պայմաններում, որոնք հնարավորինս մոտ են պայմաններին, որոնցում նրանք հավանաբար կգտնվեին հասարակությունում:

28. Պայմանական ազատման ու վերահսկողության միջոցների իրականացումը պետք է լինի կատարող մարմնի պարտականությունը՝ «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին» եվրոպական կանոնների 7-րդ, 8-րդ ու 11-րդ կանոնների համաձայն:

29. Իրականացումը պետք է կազմակերպվի «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին» եվրոպական կանոնների 37-րդ ու 75-րդ կանոնների համաձայն և «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկության 9-րդ ու 13-րդ սկզբունքների համապատասխան դրույթներով նախատեսված արդյունավետության պահանջներին համապատասխան:

## **VII. Սահմանված պայմանները չկատարելը**

30. Սահմանված պայմաններն աննշան ձևով չպահպանելու դեպքերը կատարող մարմնի կողմից պետք է կարգավորվեն խորհրդի կամ նախազգուշացման ձևով: Պայմանները չկատարելու ցանկացած լուրջ դեպք պետք է անմիջապես զեկուցվի հնարավոր չեղյալ հայտարարման մասին որոշում կայացնող մարմնին: Այդ մարմինը պետք է, այնուամենայնիվ, քննարկի, թե արդյոք լրացուցիչ խորհուրդը, լրացուցիչ

նախագգուշացումը, ավելի խիստ պայմանները կամ որոշումը ժամանակավորապես չեղյալ հայտարարելը կարող են բավարար պատասխանատվության միջոց համարվել:

31. Ընդհանուր առմամբ, սահմանված պայմանները չպահպանելը պետք է կարգավորվի «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին» եվրոպական կանոնների 85-րդ կանոնի, ինչպես նաև կանոնների X գլխի մյուս համապատասխան դրույթների համաձայն:

### **VIII. Ընթացակարգային երաշխիքները**

32. Պայմանական ազատումը տրամադրելու, հետաձգելու կամ չեղյալ հայտարարելու, ինչպես նաև դրան կից ներկայացված պայմաններ կամ միջոցներ սահմանելու կամ փոփոխելու մասին որոշումները պետք է ընդունվեն օրենքով նախատեսված մարմինների կողմից՝ հետևյալ երաշխիքներով ապահովված ընթացակարգերի համաձայն՝

- ա) դատապարտյալները պետք է ունենան օրենքի համաձայն իրենց կարծիքն անձամբ արտահայտելու ու օժանդակություն ստանալու իրավունք.
- բ) որոշում ընդունող մարմինը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի բոլոր մանրամասներին, այդ թվում՝ դատապարտյալների կողմից ներկայացված՝ իրենց դեպքը հիմնավորող հայտարարություններին.
- գ) դատապարտյալները պետք է ունենան իրենց գործի նյութերին ծանոթանալու համարժեք հնարավորություն.
- դ) որոշումներում պետք է նշվեն որոշման հիմքում ընկած պատճառները, և դրանք պետք է գրավոր ձևով ծանուցվեն:

33. Դատապարտյալները պետք է կարողանան բողոք ներկայացնել օրենքի համաձայն ստեղծված՝ ավելի բարձր ատյանի անկախ ու անաչառ՝ որոշում ընդունող մարմին՝ որոշման էության, ինչպես նաև ընթացակարգային երաշխիքները խախտելու դեմ:

34. Բողոքարկման ընթացակարգերը պետք է հասանելի լինեն նաև պայմանական ազատումն իրականացնելու առնչությամբ:

35. Բողոքարկման բոլոր ընթացակարգերը պետք է համապատասխանեն «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին» եվրոպական կանոնների 13-րդ ու 19-րդ կանոններով սահմանված երաշխիքներին:

36. Ոչինչ 32-35-րդ պարբերություններում չպետք է մեկնաբանվի որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով այդ առնչությամբ երաշխավորվող որևէ իրավունքի սահմանափակում կամ դրանից շեղում:

#### **IX. Որոշումների ընդունման գործընթացը բարելավելու մեթոդները**

37. Պետք է խրախուսվի ռիսկերի ու կարիքների հուսալի գնահատման գործիքների օգտագործումն ու զարգացումը, որոնք այլ մեթոդների հետ կօժանդակեն որոշումների ընդունման գործընթացին:

38. Որոշում ընդունողների համար պետք է կազմակերպվեն տեղեկատվական հանդիպումներ և (կամ) վերապատրաստման ծրագրեր, որոնցում իրենց մասնակցությունը պետք է ունենան իրավաբանական և հասարակական գիտությունների ոլորտի մասնագետները և պայմանականորեն ազատված անձանց սոցիալական վերականգնման մեջ ներգրավված բոլոր անձինք:

39. Պետք է ձեռնարկվեն քայլեր՝ որոշումների ընդունման գործընթացում հետևողականության համարժեք մակարդակ ապահովելու նպատակով:

#### **X. Պայմանական ազատման մասին տեղեկությունները ու խորհրդատվությունը**

40. Քաղաքական գործիչներին, դատական մարմիններին, որոշում ընդունողներին և կատարող մարմիններին, համայնքի ղեկավարներին, տուժողներին ու ազատությունից զրկված անձանց օգնություն տրամադրող միավորումներին, ինչպես նաև այդ թեմայով հետաքրքրվող համալսարանական դասախոսներին ու հետազոտողներին պետք է տրամադրվեն տեղեկություններ և խորհրդատվություն՝ պայմանական ազատման իրագործման և այս ոլորտում նոր օրենսդրության կամ պրակտիկայի ներմուծման մասին:

41. Որոշում ընդունող մարմինները պետք է ստանան տեղեկատվություն այն ազատությունից զրկված անձանց թվի մասին, ում նկատմամբ պայմանական ազատումը

կիրառվել է հաջողությամբ կամ ոչ հաջող կերպով, ինչպես նաև տեղեկատվություն՝ հաջողության հասնելու կամ ձախողելու հանգամանքների մասին:

42. Պետք է օգտագործվեն լրատվամիջոցներ, կազմակերպվեն քարոզարշավներ՝ պայմանական ազատման կիրառման ընթացքում տեղի ունեցող նոր զարգացումների և քրեական արդարադատության համակարգում դրա դերի վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու նպատակով: Այդպիսի տեղեկությունները պետք է անհապաղ տրամադրվեն ազատությունից զրկված անձի պայմանական ազատման ժամանակահատվածում ի հայտ եկած ցանկացած նշանակալի և հրապարակային ձախողման դեպքում: Քանի որ նման իրադարձությունները գրավում են լրատվամիջոցների ուշադրությունը, ապա պետք է ընդգծվեն նաև պայմանական ազատման նպատակն ու դրական հետևանքները:

## **XI. Ուսումնասիրությունները և վիճակագրությունը**

43. Պայմանական ազատման գործող համակարգերի նպատակահարմարության ու դրանց հետագա զարգացման մասին ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար պետք է իրականացվի գնահատում, և պետք է կազմվի վիճակագրություն՝ այս համակարգերի աշխատանքի ու պայմանական ազատման հիմնական նպատակների իրականացման մասով դրանց արդյունավետության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու նպատակով:

44. Ի լրումն վերը առաջարկվող գնահատումներին, պետք է խրախուսվի պայմանական ազատման համակարգերի աշխատանքի ուսումնասիրությունը: Նման ուսումնասիրությունը պետք է ներառի դատական մարմինների ու որոշում ընդունող մարմինների, կատարող մարմինների, տուժողների, հասարակության անդամների ու ազատությունից զրկված անձանց տեսակետները, վերաբերմունքն ու ընկալումները պայմանական ազատման վերաբերյալ: Մյուս կարևոր հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեն, ներառում են պայմանական ազատման ձախսարդյունավետությունը, կրկնահանցագործության մակարդակի նվազեցումը, պայմանական ազատված անձանց՝ հասարակական կյանքին հաջողությամբ ինտեգրվելու սահմանները և այն ազդեցությունը, որը պայմանական ազատման համակարգի զարգացումը կարող է

ունենալ պատիժներ նշանակելու ու միջոցներ սահմանելու վրա, ու պատիժների կատարումը: Ազատման նախապատրաստման ծրագրերը նույնպես պետք է ուսումնասիրության ենթարկվեն:

45. Պետք է կազմվի վիճակագրություն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են պայմանական ազատված անձանց թիվը՝ ազատման իրավունքի հնարավորության մասով, ազատագրկման ձևով պատիժների տևողությունը և կատարած հանցագործությունները, պայմանական ազատում ստանալուց առաջ պատժի կրած մասը, պայմանական ազատումը չեղյալ հայտարարելու դեպքերի թիվը, կրկնակի դատապարտման դեպքերի թիվը և պայմանական ազատված անձանց քրեական անցյալն ու սոցիալ-ժողովրդագրական ծագումը: